զնա ի պարոնութիւն։ Եւ այս Բոդքովա Իւոնն երբեմն լեալ էր ի երկիրն, և յետոյ ելեալ ի յերկրէն գնացեալ էր ի Մաճարք, և յետոյ եկեալ Իլախաց երկիրս այս, ժամանակաւ ժամանակաւ կացեալ էր և առ մեծամեծս. և երկրի պարոնայք դաղտաբար սմա թղթեր առաքելով իւրեանց ձեռնագրով և մոհրովն, կոչէին զինքն ի պարոնութիւն. և նա նոցա զորդութեան վերայ ելեալ և ժողովեց զԽազախներն 400, և ընդ նոցա եմուտ ի երկիրն Օլախաց. և եկաւ ուղղորդ ի յԱն (Եաչ) ուր պարոնանիստ քաղաք է. և զմիւսն հին պարոն փախստական արարեալ ի երկրէն, ինքն նստաւ փոխանակ նորա ի պարոնութիւն։ Յետոյ դարձեալ այդ հին պարոն՝ որ է Բեդրա, ժողովեց զԹուրքն և զՄինդանն, և դարձեալ եկաւ ի այս Բոդքովային վրայ, և զինքն եհան ի պարոնանիստ ապարանիցն ի յԱն, և արար փախստական. և ինքն դարձեալ նստաւ ի պարոնութիւն։ Եւ զայս Բոդքովանն հրամանաւ թագաւորին մերոյ Ստեփանոսին՝ կամեցաւ վոյվոտան ղրկել ի թագաւորն՝ կապանօք. և աղաչեաց զվոյվոտան որ թոյլ տայ նմա, զի ինքն իւր կամաւ երթայցէ առ թագաւորն. և նա եթող զնա զի երթիցէ։ Եւ իբրեւ գնաց առ թագաւորն՝ ի նոյն ժամն զինքն կապել ետ երկաթի կապանօք, և առ իւր պահել. և յետ փոքր ժամանակի հրամայեաց գլխատել ի Լոմն։ — Յետոյ դարձեալ յետ երկուց շաբաթուցն՝ այլ ոմն ուրիշ պարոն մտաւ ի յերկիրն՝ Խազախներովն. զոր ոմանք ասացին, եթէ այդ Բոդքովային եղբայրն է. և դարձեալ եկն ի պարոնանիստ քաղաքն. և զհին պարոն զԲեդրա եհան ի ապարանիցն՝ որ է ամրոցն, և ինքն եմուտ և նստաւ ի տեղի նորա, և փակուեցաւ ի ամրոցին։ Եւ ունէր ընդ իւր 1000 Խազախ՝ դրֆանքչիք, և թոփեր այլ ունէր ի հետ իւր։ Եւ այս պարոն Բեդրն չիւարեցաւ տարակուսեցաւ, թէ զինչ առնիցէ. և զատեցաւ ի Եասէն՝ ուր դախդն էր. և հեծելովն իւրով հեռագոյն չրջէր. մինչ դարձեալ ետ բերել զԹուրքերն, և ընդ նոսա սկսաւ կռիւ առնել ի հետ այս նոր պարոնին. և որչափ մարտնչէին և կռուէին՝ այդչափ կոտորէր զնոսա այդ նոր պարոնն. և բազում Թուրքն կոտորեց և զՕլախցիքն այլ ընդ նոսա։ Եւ այս ընդերկարեցաւ մինչեւ երկու ամիս. և հանապազ պատերազմէին, և միշտ յաղթուէին և կոտորուէին այս հին պարոնին մարդիքն։ Բայց վասն այս պատճառի մեծ նեղութիւն և հալածումն եհաս այդ երկրի բնակչաց ամենայն ազգի, եթէ Հայոց և եթէ Օլախի. զոր զքաղաքս նոցա այրեց զԱն, և զամենայն ինչսն զոր ունէին՝ թալանեցին և աւարեցին, և զինքեանսն լաւ ի պատուաւոր մարդկանէ սպանանէին։ Բայց այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց. զոր Աստուած ողորմի ամենայն աշխարհի, և բառնայ զայսպիսի պատուհասն ի յամենայն երկրէ և ի սահմանացն, նա և ի մերում քաղաքէ և ի սահմանաց մերոց. ազատէ ի ձեռաց անօրինաց՝ խստաց և ապստամբողաց. և զամենայն թշնամեաց զկարողութիւն և զզօրութիւն խափանէ, և կործանէ զնոսա մինչ ի սպառ։ Նա և մեզ տացէ զգաստութիւն և արթնութիւն. զի լիցուք ըստ պատուիրանի նորա, և զտցուք զթողութիւն մեղաց մերոց. և միշտ բեւե-